

Donald V. Schwartz and Razmik Panossian (eds.), *Nationalism and History: The Politics of Nation Building in Post-Soviet Armenia, Azerbaijan and Georgia*, Toronto, University of Toronto Press, 1994, pp. xiv + 149.

Անտարակույս, ազգայնականութիւնը Անդրկովկասի այսօրուան քաղաքական անկայունութեան գարկ տուող գլխաւոր գործօններէն է, եթէ ոչ՝ կարեւորագոյնը: Խորհրդային վարչակարգը երկրամասէն ներս վարկազրկուեցաւ ո՛չ միայն իր տնտեսական անյաջողութիւններուն հետեւանքով՝ այլեւ որովհետեւ անկարող եղաւ գոհացուցիչ լուծումներ առաջարկել երկրամասէն ներս շուրջ եօթանասուամեակ ի վերուստ պարտադրուած սառեցումէ ետք վերարձակած ազգային-տարածքային տագնապներուն Այսօր, ԽՍՀՄ-ի փլուզումէն երեք տարի ետք, այդ տագնապներէն ո՛չ հալ-ազրպէլ-հանականը եւ ո՛չ ալ վրաց-արխազականը մօտալուտ լուծման մը յոյսերը կը ներշնչէ: Յիշատակուած չորս ազգայնական գաղափարախօսութիւնները կրողները տակաւին կառչած կը մնան իրենց առաւելագոյն պահանջներուն եւ, օրինական երանգ մը հաղորդելու միտումով, անոնց բոլորն ալ լաճախ կը դիմեն իրե՛նց պատմութեան գիրքերուն եւ իրե՛նց պատմաբաններուն:

Գրախօսուող յօդուածներու ժողովածուն կը միտի լաւելայլ լոյս սփռել այս երեւոյթին՝ ազգայնականութեան եւ պատմութեան միջեւ առկայ կապին վրայ՝ միշտ կիզակէտ ունենալով Անդրկովկասը: Անիկա կ'ընդգրկէ չորս տարբեր մասնագէտներու յօդուածները, որոնք, ըստ հատորի համախմբագիր Ռ. Փանոսեանի, թէեւ կը տարբերին իրենց մօտեցումներով՝ այսուհանդերձ ունին միեւնոյն թեման: Բոլորին նպատակն է, կը շարունակէ Փանոսեանը, վերլուծելով պատմագրութեան, ազգայնականութեան եւ ազգային շինարարութեան վերապահուած դերը անդրկովկասեան ժամանակակից քաղաքականութեան մէջ, մասամբ մեկնաբանել տարածքաշրջանի «ազգայնական» քաղաքականութեան հիմքը կազմող բարդութիւնները: Չորս յօդուածներն ալ նախ իբրեւ զեկուցումներ ներկայացուած էին 1991-ի Նոյեմբերին Թորոնթոյի Համալսարանին մէջ կայացած գիտաժողովի մը ընթացքին, որուն նպատակն էր ուսումնասիրել ԽՍՀՄ-ի քայքայումն ու ազգայնականութեան վերագարթումը անդրկովկասեան եւ միջին ասիական հանրապետութիւններուն մէջ: Զեկուցումներէն ոմանք բարեփոխուած են լետագային՝ դէպքերու շարագրանքը հասցնելով մինչեւ 1993-ի Նոյեմբերը:

Յօդուածներէն առաջինը կը պատկանի դանատացի (ուքրահնական ծագմամբ) պատմարան Սթիվըն Վելիչենքոյին: Ան կը քննարկէ նախկին խորհրդային կեդրոնին կողմէ պատմութեան օգտագործումը իբրև ընդհանրական՝ խորհրդային ինքնութիւն կերտելու եւ ազգամիջեան յարաբերութիւնները կարգաւորելու գործիք: Վելիչենքոն իրաւամբ կը մատնանշէ, թէ հակառակ միջազգայնական ու դասակարգային ըլլալու իր հաստիացումներուն՝ խորհրդային իշխանութեան տարիներուն պետական քաջալերանքով ստեղծուած այսպէս կոչուած ԽՍՀՄ-ի պատմութիւնը գերագանցապէս «ազգային» պատմութիւն մըն էր, ուր հիմնական շեշտը կը դրուէր Ռուսաստանի պատմական փորձառութեան վրայ եւ ուր կը շեշտուէին ռուսական ազդեցութիւնը ԽՍՀՄ-ի միւս ժողովուրդներուն վրայ եւ վերջիններուն ու ռուսերու միջեւ պատմական զարգացման նմանութիւնները, եւ ընդհակառակը, սովորաբար կ'անտեսուէին տարբերութիւնները: Այսպիսով, կ'եզրակացնէ Վելիչենքոն, յատկապէս Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն ետք, ԽՍՀՄ-ի ոչ-ռուսական հանրապետութիւններուն պատմութիւնները պարզապէս չէին համապատասխաներ «ազգային պատմութեան»: Հիմնական չափանիշին եւ անոնց պատմական առանձնայատկութիւններուն վերհանման: Ընդհանուր առմամբ, Վելիչենքոյի յօդուածը շատ քիչ նորութիւն կը պարունակէ անոնց համար, որոնք անցեալին հետաքրքրուած են այս նիւթով: Որոշակի հետաքրքրութիւն կը ներկայացնեն, սակայն, հեղինակին մտորումները խորհրդային եօթնասունամեայ պատմագրութեան ոչ-ռուսական հանրապետութիւններու պատմագրութեան վրայ թողած ազդեցութեան մասին: Ան կը նախագուշակէ թէ անցեալը քաղաքականօրէն շահագործելու միտումը առկայ պիտի մնայ որոշ ժամանակ նորանկախ երկիրներու պատմաբաններուն մօտ, բայց չոյս կը յայտնէ, թէ ազատութեան, բարօրութեան եւ օրինականութեան տարածմամբ ազգային պատմութիւնը Արեւելքի մէջ - ինչպէս որ է անիկա այսօր Արեւմուտքի մէջ - պիտի վերածուի լոկ ժանրի մը եւ դադրի ըլլալէ շովինիզմի գործիք մը, որ անիկա աւելի մեծ ուշադրութիւն պիտի դարձնէ տարբերութիւններուն վրայ քան թէ միութեան, ոյժի եւ պետականութեան աղբիւրները որոնելու ռանքական աւանդոյթներուն: Միաժամանակ, պարզ կը գիտակցուի, որ Վելիչենքոն կը ցանկայ, որ նորանկախ հանրապետութիւններու «ազգային» պատմութիւնները աւելի մեծ տեղ տրամադրեն այնտեղ ապրող էթնիկական փոքրամասնութիւններուն:

Գրախօսուող հատորին մէջ ընդգրկուած մնացեալ երեք յօդուածները կը կեդրոնանան անդրկովկասեան տարբեր օրինակներու

ուսումնասիրման վրայ:

Ճրանսահայ, քալիֆորնիաբնակ պատմաբան Ստեփան Աստուրեանը համեմատական ուսումնասիրութեան կ'ենթարկէ վերջին շՐՐ-ջանին հայաստանցի եւ ազրպէյճանցի պատմաբաններուն կողմէ համապատասխանաբար յառաջ քաշուած տեսութիւնները իրենց ազգերու ծագման (ethnogenesis) վերաբերեալ Աստուրեանի համար էականը այն չէ թէ բազմազան տեսութիւններէն ո՞րն է ճիշդը եւ ո՞րը՝ սխալը: Ան աւելի հետաքրքրուած է այդ տեսութիւններուն բազմազանութեան եւ մերօրեայ քաղաքական խնդիրներուն հետ անոնցմէ իւրաքանչիւրին ունեցած կապով:

Յօդուածին մէջ Հայաստանին ու Ազրպէյճանին յատկացուած բաժինները որակապէս համանման չեն: Առաջին հերթին իրարմէ որոշակիօրէն կը տարբերին հայաստանցի եւ ազրպէյճանցի պատմաբաններուն առաջադրած խնդիրները: Հայաստանի պարագային՝ Աստուրեանը հարազատօրէն կը վերաշարադրէ հայ ժողովուրդի ծագման «դասական» (Տիաքոնով, Առաքելեան, Ջահուկեան, եւ Սարգըսեան) եւ «սրբագրող» (Իշխանեան, Ուլուբաբեան, եւն.) տեսութիւններուն հիմնական դրոյթներն ու իւրաքանչիւրին կարծիքը Ուրարտուի տեղին ու դերին մասին հայ ժողովուրդի ընդհանրական պատմութեան մէջ: Աստուրեանը կ'ընդգծէ թէ «դասական» տեսութեան հակադրուող, հայ ժողովուրդը հնուց ի վեր բնիկ եւ Ուրարտուն ալ Հայաստան համարող հեղինակները կը կարծեն թէ իրենք այդպիսով ա'լ աւելի հիմնաւորած կ'ըլլան Լեոնային Ղարաբաղի նկատմամբ հայկական պահանջատիրութեան արդարացիութիւնը: Անառարկելի կերպով ճիշդ են Աստուրեանի նկատողութիւնները թէ վերակառուցման տարիներուն հայաստանեան պարբերական մամուլը բեւեռացած էր այս բանավէճին շուրջ եւ թէ «դասական»-«սրբագրող» պայքարը կը վարագուէր այլ հակամարտութիւն մը ակադեմական գիտնականներու եւ նուազ փառքի արժանացած մասնագէտներու միջեւ: Կարելի չէ համաձայնիլ, սակայն, Աստուրեանի այն պնդման հետ՝ թէ այդ բանավէճը միաժամանակ արտայայտութիւնն էր համայնավարամիտ գիտնականներու եւ բարեփոխութեանց կողմնակից մտաւորականութեան միջեւ ընթացող պայքարին: Աստուրեանը կը լիշատակէ հնագէտ եւ նախկին պետական նախարար Գրիգոր Արէշեանի անունը իբրեւ բացառութիւն, բայց ո՛չ մէկ հրապարակուած հիմք կալ Գագիկ Սարգսեանը, Գէորգ Ջահուկեանը կամ Բարկէն Առաքելեանը կորպաչեւեան բարեփոխութեանց հակառակօրդ համարելու համար: Աստուրեանի ուշադրութենէն հեռու կը մնայ նաեւ այդ տարիներուն Երեւանի մէջ լոյս տեսած Փիլնիկ գիտահանրամատչելի հան-

դէսը, որ ո՛չ միայն Ղարաբաղ կոմիտէի համակիրն էր՝ այլ մանաւանդ սուր քննադատութեան կ'ենթարկէր Իշխանեանի եւ Ռւլուբարեանի տեսութիւնները: Աստուրեանը թերեւս անհրաժեշտ էր որ լիշատակէր նաեւ թէ «սրբագրող» տեսութիւնն յառաջ քաշողներէն եւ ո՛չ մէկը քննարկուող հարցին նեղ մասնագէտն էր:

Աստուրեանի յօդուածին Ազրպէյճանի վերաբերող մասը համեմատաբար թույլ է, գուցէ որովհետեւ ի տարբերութիւն հայկական բաժնին՝ ան չէ կրցած անմիջականօրէն հարցապնդել կամ խորհրդակցիլ Ազրպէյճանի մասնագէտներու հետ: Այս բաժնին մէջ օգտագործուած սկզբնաղբիւրներն այլ հետեւողական չեն, եւ ի վերջոյ ընթերցողին յստակ չի դառնար թէ յօդուածին այս հատուածը կը նպատակադրէ հարցին պատմակա՞նը կատարել՝ թէ ոչ սահմանափակուիլ վերակառուցման տարիներուն արծարծուած տեսութիւններով: Աստուրեանը կ'ընդգծէ թէ ազրպէյճանական ժամանակակից մտաւորականութիւնը կը փորձէ ստեղծել ազգային ծագման տարած քային տեսութիւն մը, որուն համաձայն մերօրեայ ազրպէյճանացիներուն նախահայր կը հռչակուին ներկայիս Ազրպէյճանի տարած քին վրայ գոյացած բոլոր հին պետական միաւորներու բնակիչները (Մաննա պետութիւն, մարեր կամ մեղացիներ, Ատրպատականի պետութիւն, աղուաններ, եւն.): Աստուրեանը կ'ըսէ թէ վերոյիշեալ տրամադրութիւնը Ազրպէյճանի տարած քային տիրոջութներուն օրինականութիւնը հիմնաւորելու արդիւնքն է: Վերջապէս, համեմատութեան մէջ ղենելով Հայաստանի եւ Ազրպէյճանի օրինակները՝ Աստուրեանը կ'եզրակացնէ թէ որքան «երիտասարդ» ըլլալ ազգ մը (այս պարագային՝ ազրպէյճանացիները)՝ այդ չափով աւելի ճկուն կ'ըլլալ անոր ինքնութիւնը, եւ անոր Էթնիկական սերունդաբանութիւնը՝ աւելի բազմանշանակ:

Աստուրեանի յօդուածին առանցքային նիւթը շատ հետաքրքրական է եւ ուսուցողական: Կը մնայ յուսալ, որ ան լետագային առիթ ու ժամանակ գտնէ աւելի խորացնելու եւ համընդգրկուն դարձնելու ուսումնասիրութիւնը:

Ամերիկացի ազրպէյճանագէտ Օտրի Ալթսթատը իր յօդուածը խորագրած է «Ազագաղութացումը Ազրպէյճանի մէջ եւ պայքարը լանուն ժողովրդականացման»: Եթէ նախորդ երկու հեղինակները՝ Վելիչենքոն եւ Աստուրեանը կ'ընդունէին որ անկախ իր հետապնդած անմիջական նպատակներէն՝ ԽՍՀՄ-ի կեդրոնական կառավարութեան վարած ազգային քաղաքականութիւնը առարկայականօրէն նպաստած էր ծալրամասային հանրապետութիւններու գերիշխան ազդութիւններու ազգային ինքնագիտակցութեան ամրապնդ-

ման՝ ապա բոլորովին տարբեր է Ալթսթատի մօտեցման տեսական հիմնաքարը: Ալթսթատը կը պնդէ թէ Խորհրդային իշխանութեան ցանկութիւնն էր ջլատել Ազրպէյճանի եւ ծալրածասային միւս հանրապետութիւններուն մէջ ազգային ինքնագիտակցութեան բոլոր նշանակալից տարրերը: Ուստի, կ'եզրակացնէ անիկա, Ազրպէյճանի համար ապագադութացում կը նշանակէ ո՛չ միայն համայնավար կուսակցութեան քայքայում ու քաղաքական անկախութեան հռչակում՝ այլ տեղական-հայրենասիրական քաղաքացիական պայքար, ազգային-տնտեսական շահերու հետապնդում, մշակութային վերաշինութեան եւ իրաւական պետութեան հաստատում (որովհետեւ, ըստ Ալթսթատի, օրինականութիւնը մաս չի կազմեր Խորհրդային կամ ուսական սովորութիւններուն): Ալթսթատը կ'ըսէ թէ Ազրպէյճանի մէջ ապագադութացման առաջին փորձը տեղի ունեցած է մեր դարասկիզբին եւ իր բարձրակէտին հասած՝ 1918-1920 թուականներու անկախութեան տարիներուն: Ապագադութացման ներկայ փուլին սկիզբը Ալթսթատը կը դնէ 1970-ականներու ըսկիզբը: Ըստ իրեն՝ այդ գործընթացը լաւագոյնս յառաջ կրնան տանիլ Ապուլֆազ էլլիպէյի Ազրպէյճանի ժողովրդական ճակատն ու էթիպար Մամետովի Ազրպէյճանի Ազգային Անկախութեան կուսակցութիւնը: Ալթսթատը աւելի կասկածամիտ է Ալազ Մութալիպովի եւ Հէյտար Ալիեւի նկատմամբ: Աւելին՝ Լեւոնային Ղարաբաղի տագնապը առանձին կարգաւորելու Ռուսաստանի փորձն ու Ազրպէյճանի մէջ ուսական զօրքերու տեղակայումը ժխտական հետեւանքներով լեցուն կը պատկերացնէ ապագադութացման գործընթացի արմատաւորման համար: Ասկէ կը բխի հեղինակին լուստեսութիւնը ապագադութացման հեռանկարներուն վերաբերեալ:

Ալթսթատի ներկայացուցած ընդհանուր պատկերը բաւականին պարզունակ է եւ գրեթէ նկատի չ'առնել Ազրպէյճանի ներքին կեանքին հետ աւրնչուող տարաբնոյթ այլ ազգակներ, որոնք նոյնպէս իրենց հետքը կը թողուն երկրէն ներս դէպքերու զարգացման ընթացքին վրայ:

Չորրորդ եւ վերջին յօդուածի հեղինակն է անգլիացի վրացագէտ Սթիվըն ձոնգը: Ան լուսարձակի տակ կ'առնէ Չվիատ կամսախուրտիայի նախագահութեան ժամանակաշրջանը իբրեւ արմատականօրէն տրամադրուած փոփոխիւտական քաղաքականութեան տիպար: ձոնգը մէկ առ մէկ քննութեան կ'առնէ կամսախուրտիայի որդեգրած գաղափարախօսութեան այլազան երեսակները: Վրաստանի մէջ կատարուածը, կ'ըսէ ձոնգը, բացառութիւն մը չէր եւ կրնայ լո՛կ բարացուցական ըլլալ լետ-խորհրդային այլ հանրապետու-

թիւններուն մէջ նմանատիպ երեւոյթներ ուսումնասիրելու ժամանակ:

Գրախօսուող ժողովածուին ընդհանուր արամադրութիւնը յոռեանսական է: Գրեթէ ամէնուրեք պատմագրութիւնը կը ներկայացուի իբրեւ քաղաքագէտներու ձեռքին հլու գործիք մը, որուն հետեւանքները ընդհանուր առմամբ ժխտական են: Ըստ ժողովածուն կազմողներուն՝ անդրկովկասեան պատմագրութիւնը ցարդ գրեթէ միայն ազգամիջեան հակամարտութիւններ հրահրողի դերին մէջ եղած է: Համախմբագիր Շուրըցը կոչ կ'ուզէ շրջանի պետութիւններուն, որ զօրակցին իրենց երկիրներէն ներս հանդուրժողութեան եւ փոխգիշողականութեան հակուած պատմագրութեան մը զարգացման: Հաւանաբար ճիշդ է Թորոնթոյի Համալսարանի քաղաքական գիտութեանց բաժանմունքի դասախօսը: Ալլապէս հրատարակիչներն ինչո՞ւ ստիպուած պիտի ըլլային այս գիրքը ձօնել Անդրկովկասի մէջ շարունակուող բազում հակամարտութեանց հետեւանքով տեղահան եղած բոլոր գաղթականներուն:

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ